



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ՈՐՈՇՈՒՄ**

«22» հոկտեմբերի 2020 թվականի N 2 - ՆԻ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի ԹԻՎ 16/2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 12-Ա ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 13-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 3-րդ մասով և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 16/2 որոշման թիվ 36 հավելվածի (հինգերորդ վարչության գլխավոր մասնագետի (46-32.5-Մ2-4) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիր) 3.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.1. Կրթությունը, որակավորման աստիճանը

1.	Ուղղություն	Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն
2.	Ոլորտ	Ճարտարապետություն և շինարարություն
3.	Ենթաոլորտ	Շենքերի և քաղաքային ճարտարագիտություն
4.	Մասնագիտություն	Շինարարություն

2. Հաստատել Հաշվեքննիչ պալատի արարողակարգի և փաստաթղթաշրջանառության վարչության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը համաձայն թիվ 77, 78, 79, 80 և 81 հավելվածների:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահի 2014 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմի հաստիքացուցակում փոփոխություններ ու լրացումներ կատարելու և քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 12-Ա հրամանով հաստատված հավելվածները (քաղաքացիական ծառայության 90-2.1-18, 90-2.2-24, 90-2.3-78, 90-2.3-79 և 90-2.3-80 ծածկագրերով պաշտոնների անձնագրեր):

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

 Լ. ՅՈԼՅԱՆ